Հայոց լեզվի,գրականության, ՆԶՊ-ի և հասարակական գիտությունների

մեթոդմիավորման նախագահի 2022-2023 ուստարվա

Տարեկան պլանավորում

ԻՊ/Տ Հաստատվեց՝
Ս.Մելքի-Փաշայան

Մեթոդմիավորումը 2022-2023 ուստարում ուսումնադաստիարակչական գործընթացը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար պլանավորել է հետևյալ բազմաբնույթ աշխատանքները, որոնց նպատակն է զարգացնել սովորողների մտավոր, հոգևոր կարողությունները,լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության,մարդու իրավունքների, ազգային և համամարդկային արժեքների ճանաչողության ձևավորումը:

Մեթոդմիավորման նպատակները և խնդիրներն են.

- Քննարկել հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական պլանների նախագծերը,նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալ երաշխավորություններ:
- Ուսումնասիրել, ընդհանրացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում:
- Նպաստել ուսուցիչների որակավորման բարձրացմանը:
- Աշխատել սկսնակ ուսուցիչների հետ:
- Ատեստավորման ենթակա ուսուցիչներին նախապատրաստել:
- Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական մեթոդական խորհրդատվություններ:
- Մեթոդմիավորման անդամներին հաղորդակից դարձնել մանկավարժական նորագույն նվաճումներին:
- Սահմանված կարգով կազմակերպել փորձարկվող դասագրքերի փորձաքննություն:
- Առաջարկություն ներկայացնել դպրոցի տնօրենին ուսումնական պլանով սահմանված դպրոցական բաղադրիչ ժամերի տնօրինման մասին:
- Կատարել ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն ներկայացնել դպրոցի տնօրենին:
- Կազմակերպել դպրոցական օլիմպիադաներ, առարկայական միջոցառումներ, մրցույթներ:
- Գումարել մեթոդմիավորման նիստեր ամիսը մեկ անգամ , սահմանված կարգով նիստերը արձանագրել:
- Ապահովել աշխատանքային խաղաղ մթնոլորտ ,կարևորել թիմային աշխատանքը:
- Դասապրոցեսի ընթացքում կիրառել ՏՀՏ միջոցներ:
- Անցկացնել տարաբնույթ << բաց >> դասեր:
- Ժամանակին լրացնել էլեկտրոնային մատյանը: